

ԽՈՅ՝ ԳԵՄ՝ ՀՆԶ՝ ԿՈՒՄ՝ ԱՄԵՐ՝ ՇՐՋ՝ ԿՊՎ՝-ՄԱՐՄԻՆ՝ ԹԻՎ՝ 26

ԵՐԳ՝-ԵՐԳՈՑ

ԳՐԵՑ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԷՆՃԵԱՆ



Տ Գ Ա Ր Ա Ն


«ԵՐԿՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

1 9 2 0

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page, including the number '10'.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.



493

ՍՕՑ. ԴԷՄ. ՀՆԶ. ԿՈՒ. ԱՄԵՐ. ՇՐՋ. Կ.-Վ.- ՄԱՐՄՆԻ ԹԻԻ 26

891.99
4-41

ԵՐԳ-ԵՐԳՈՑ

ԳՐԵՑ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԷՆՃԵԱՆ




Տ Պ Ա Ր Ա Ն

«ՆՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

A I
14397

1920
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՆԴՐԱՆԻԿ Ն. ԿԷՆՃԵԱՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ


Ընկ . Անդրանիկ Կէննեան Համերոպական պատերազմի ատեն ապրելով Թուրքիոյ պէս Դժոխքի մը մէջ , նա ոչ միայն չէ կորսնցուցած իր գրական ընտիր տաղանդը , որ իր ինքնատուրքեամբը արժանի է առանձին գնահատութեան , այլեւ աւելի դիւթիչ ու գմայլելի նկարներ է որ կը պարզէ , հէնց ահաւոր սարսափի օրերուն իսկ :

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի խմբագրութիւնը հրատարակելով ընկեր Անդրանիկ Կէննեանի այս գողտրիկ ոտանաւորներու սիրուն փնջակը , ուր արցունքէ աւելի յոյսն ու հաւատքն է որ կը փայլի , կը հրաւիրենք ընկեր Կէննեան , գրական հրապարակին վրայ , ուր մանաւանդ վերջերս , անհաշակ սկսնակներու մրցակցութիւնն է որ տեղի կունենայ խօլական թափով :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ


«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն




(ԵՐԳ ԵՐԳՈՅ)

Ա.



«Ինչպէս խնձորենին անտառի ծառերուն մէջ,
Այնպէս է իմ սիրականս երիտասարդներուն մէջ
Անոր հովանիին տակ ախորժելով նստայ,
Ու անոր պտուղը իմ բիմբիս քաղցր է»:

ՍՈՂՈՄՈՆ



Ոռնացող գայլեր,
Դաշտ, ծըմակ ու լեռ,
Գունչի արիւնտ
Կը սրսկեն ժանտ հոտ.
Անյագ ծարար

Վերքի շարաւր
Սուր բիբերնուն մէջ,
Կըրակով մ'անշէջ
Բըռընկած, շըշմած՝
Զերթ թուրք անաստուած,
Հայ գեղանշոյլ
Կոյսերն սիրասոյլ
Հալածեն անվերջ:
Գագանաց կեղերջ
Կեանքն է պակուցեր,
Ալ չէ մընացեր
Որքի, անկարի
Պաշտպան քաջարի:
Եսասէր մարդիկ
Ծեփծեփ, սըպըրկիկ,
Գիտեն անտարբեր,
Զունին խիղճի բեռ.
Գայլը թող ուտէ
Տանիկն բզկտէ
Հայըն անտէրունչ,
Գիտապաստ, անշունչ:
Որին ի՞նչ փոյթն է,
Ո՞վ ականջ դընէ:



Բաշերն առիւծին
Յըցուին ուժածին ,
Հայ կըտրին տըղայ
Անգուսպ ծընծըղայ ,
Ոտներին քափ տայ ,
Ասպարէզ կը գայ ,
Տալու դաս ահեղ
Անխընայ շատ հեղ :
Քոյրերի պաշտօնան
Պատուոյն պահապան
Ատանկ կըտրիններ
Հայն է լոկ ծներ :

Սէրին մէջ աննենգ
Աղջիկներն ամենք ,
Հաւատքի մաքուր
Զըւարակ անձնիւր ,
Մասեաց սարերէն
Հայոց ջըրերէն
Տաւրոսի կողին
Հայերու հողին
Շունչովն են սընած ,
Ու՞ր ունէք տեսած ,
Ատ սըրբուհիներ ,
Հայն է լոկ ծներ :

Ի՞նչ է հայ ըլլալ,
Բաժինն է միշտ լալ .
Հայ ազատութեան
Փըշոտ է նամբան :
Կեանք հայ բանուորին
Զոհն ունեւորին .
Գեղը հայ կոյսին
Լըլկանքի ուսին,
Ծանակ մը թուքին
Վայրենի թուքին :
Բա՛նտ, մա՛հ, կախաղա՛ն
Զի լար հայ տըղան :

Աւե՛ր ամեն կողմ,
Աշխարհի չորս հողմ
Խորշակ են հայուն .
մեն կողմ վայիւն,
Բայց ի՛նչ հըրապոյր
Խընկենի մի բոյր
Ունիս արդեօք Դուն
Իմ հայրերու բոյն
Որ քիմքիս համար
Ամենէն յարմար
Մընաս քաղցր պտուղ
Հա՛յ, դուն հոգերուիս :

Բ.

—...1887...—

«Ինչպէս շուտանը փուտերուն մէջ,
Այնպէս է իմ սիրուիս աղջիկներուն մէջ»:

ՍՈՂՈՄՈՆ

—......—

Սարսափ՝ գագանին,
Սեւ պատկեր ջարդին,
Կըսկիծ քալանին,
Հայ օրիորդին
Աւաչն անէծփին,
Ժամսէր մամիկին
Հըռինդ բողոքին,
Յուզեր են հոգին
Տարագիր հային.
Երկինք կը նային
Աչերն մոլորուն
Յուսահատ անփուն:
Հիւծումն ալ սիրտին
Մահն է հաւատփին:

Պարտէզին մէջ կայ
Պալատ մարմարեայ .
Քիւերն խարխուլած ,
Սիւներն փրլփրլած ,
Աւերակներուն
Վերայ երերուն
Բուերն են թառած .
Հոգիներն մեռած
Դեւերուն լալկան
Կըռընչել կուգան .
Տարագիր հայուն
Կըթոտ ոտներուն
Ոյժն է սպառած ,
Կը նըստի՛ մարած :

Ծաղիկներ բուրեան ,
Վարդեր ու շուշան
Գիրկ գըրկի գուգուած ,
Իրար խառնըւած ,
Խարոյկը ձըգուած
Հայ նահատակաց
Անբիծ ու մաքուր
Կոյսերուն հանուր ,
Սըրբակէզ բոց հուր ,

Շունչի անոյշ բոյր ,
Սըրսկեն ոլորուն
Օդին , ամպերուն :
Ցընցդեն կոյսի բոյր
Հայո՛ւ հոգեթոյր :

Տարագիրն բանայ
Աչերն ապակեայ .
Փուշեր խըռուացած
Քամել ու ծըծել ,
Ժանտ տատասկներ ցած ,
Աւիշը հիւծել ,
Հիւթ ցօղուններուն
Զոյգ ծաղիկներուն ,
Կուզեն իբրը դեղ
Կիրքերնուն թունեղ :
Փուշեր բազմազգի
Զարդողք հայ Ազգի ,
Խենէշ պարերով
Ցընծան անվըրդով :

Պարտէզն համօրէն ,
Սուրացող հովէն—
Հովին օրօրէն ,—

Շըլմոր կուրծրէն ,
Վըրէժի քուրիւն
Ճարնատող հուրիւն
Լափլիզող շունչիւն
Կըլլայ գոհն չնչիւն :
Այրած այդ արտիւն
Տեղերն անդունդիւն
Ածունէր կանաչ ,
Զըւարթ ,աննանաչ ,
Բացունիւն , ուր այլեւս
Վարդերն կանգնիւն վէս :


Հայ օրիորդիւն
Կուսական սիրտիւն ,
Ո՛վ սուրբ գարդ անգիւն ,
Շուշան անմեկիւն
Գրրախտ—Հայաստան
Քաջերու ոստան .
Քեզ թըռչիւն յաւերժ ,
Տենչանքներն անվերջ
Հայ նահատակաց
Ոսկերացն անլաց :
Շուշանի քոյրէդ
Հիւլէ մը քոյրէդ ,
Բաւ է ինձ համար ,
Գեղո՛յդ սիրահար :

Գ.



«Քու անունդ քափուած իւղի պէս է,
Անոր համար օրիորդները քեզ կը սիրեն»:

ՍՈՂՈՄՈՆ



Լինելութեան Խորհուրդին
Մայր-Խորանն է մըթապատ .
Զահ մը միայն կայ անդին ,
Զոհի ֆեններ — իւղակաթ ,
Ուր արիւն-լաց կայրին յար ,
Ազատութեան փանապարհ
Յըցանիշող նըշոյլներ
Յընցուղելով անվեհեր :

Հայու արիւն , հայու լաց ,
Վեց դարերու մըշտակաց
Տառապանքէն բըրգացած ,
Այդ ջահին խայծն է եղած :

Քուրվառ խունկի պաշտաման,
Կրնդրուկ-սիրտերն կուսական,
Հառաչի բարդ քուլաներ
Անհունին ծոցն են ժայթփեր :

Հայու հառաչ, հայու վիշտ
Վեց դարերու կարեվէր,
Խօլական պար բըռնած միշտ
Մասեաց քունէն վրդովեր :

Հայու ողջ հողն՝ գերթ քաժակ,
Սուրբ սրկի մը անապակ,
Նահատակաց արիւնով
Լեցուեր,— յորդե՛ր է անով :

* * *

Խունկ բուրումը հայութեան
Անվերջ թափուած սուրբ արեան,
Պատոեր է ալ մաղգմայն
Զոհի քաժկին—սու՛րբ աման :

Հայ մայրերու, հայ կոյսի,
Սիրոյ բուրումն կը հոսի .

Լեռներն համակ Տարոսի
Բոյր- բիւրեղ մ'են նարդոսի :

Անթաղ մարմին Հայուքեան ,
Անոյշ բոյրի՛ խընկաման ,
Յընցեր է ջիղն աննըման :

Հայ ջիղերու , հայ միտքի
Թրթռումն՝ հաներ է ոտքի ,
Ազատութեան սուրբ հոգին ,
Հայուն աւանդ կաթոգին :

Արին շաղախ հայ հոգէն ,
Հայ կոյսերու սուրբ կողէն ,
Նոր Հայաստանն է յառներ .
Բացէ՛ք Հայուն դըրօշներ :

• • •

Հայ դարերու ընդմէջէն
Լըսուող երգէն կենսաշէն ,
Հայ գոհերու հոգիէն՝
Հայ դարերու ընդերքէն
Աւանդ թողած կայծերէն ,
Կայծ մ'ալ ապրող հայերուս
Էութեանը թող բերեն .

Հայն թող ձուլուի նորալոյս
Ազատութեան երգին մէջ,
Ներդաշնակ ու ա՛լ անշէջ:

Հայու բուրում, հայու երգ,
Հայաստանի հողն ու բերք,
Լեցուցեր են մեր սիրտեր.
Քեզ, շենք կրնար չի պաշտել:

ԴԱՄԱՍԿՈՍ


ՎԵՐՋ



A $\frac{F}{14397}$

1891
The year was a
very successful
one for the
company. The
sales were
up to the
mark and the
profits were
good. The
management
was very
efficient and
the work was
well done.

1892



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0054296

[104]

A \bar{I}
14397